# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ.18

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 19.12.2017թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կատարվող, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորումը:
2. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի 44 անդամներից ներկա էին 28-ը, այդ թվում 9 դոկտոր, 14 գիտության թեկնածու:

**1.Լսեցին** - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կատարվող, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:

**Որոշեցին** – Ընդունել

**ա/** «Հետազոտություններ դիֆերենցիալ օպերատորների սպեկտրալ տեսության բնագավառում և նրանց կիրառումը բնագիտական խնդիրներում» գիտական թեմայի (ղեկավար ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Ն. Հարությունյան)

**բ/** «Միակության հարցեր Ֆրանկլինի շարքերի համար» գիտական թեմայի (ղեկավար ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գ. Գևորգյան)

գ/ «Պարբերական խմբեր և խմբերի հյուսվածքներ: Կառուցվածքային հարցեր» գիտական թեմայի (ղեկավար ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ս. Աթաբեկյան)

ամփոփիչ հաշվետվությունները և աշխատանքները համարել բավարար:

**2.Լսեցին** - Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:

**Որոշեցին** – Հաստատել ասպիրանտներ

1. Մարգարիտա Արաիկի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պաշարների կառավարման մոդելների ասիմպտոտիկ վարքի հետազոտումը կրիտիկական բեռնվածության պայմաններում», Ը.00.08.–մաթեմատիկական տնտեսագիտություն մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռոբերտ Նավասարդի Չիթչյանին:

2. Արփինե Վարդանի Նուրջանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Տնտեսական գործակալի» մոդելի կիրառությունը մակրոտնտեսական վերլուծություններում», Ը.00.08.–մաթեմատիկական տնտեսագիտություն մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վասակ Հովհաննեսի Թորոյանին:

**3.Լսեցին** - Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:

Ամբիոնները ներկայացրեցին մագիստրոսական թեզերի թեմաները և համապատասխան գիտական ղեկավարներին:

**Որոշեցին** – Հաստատել ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները /կցվում է/:

**4.Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ Ա. Ա. Սահակյան
Գիտքարտուղար Ս. Հ. Ջիլավյան